

վանքեր ու եկեղեցիներ կառուցուեցան նոյն Անապատին մէջ, բայց չխափանուեցան անապատականներու խուցերը . նոյն իսկ արաբ պատմիչներ կը յիշեն քէ իսլամ իրապետութեան օրով Սելովամի շրջակայքը, մասնաւորապէս Թեոդոսի եւ Սաբայի մեծ վանքերու փոյ, կը մնային հազարաւոր խուցեր ուր կը բնակէին մենակեացներ, որոնց այդքան բազմութեամբ խցաբնակութիւնն ու շրջապալութիւնը առիք տուած է յարձակումներու եւ կոտորածներու : Պատմական այս իրողութենէն կը հետեւի ուրեմն քէ որքան որ եգիպտոսի Անապատին մէջ խցային վիճակը դադրած ու անոր յաջորդած էին վանքերը, բայց երուսաղէմի Անապատը կը պահէր իր խցային կեանքը, հիմնարկելով հանդերձ մեծամեծ ու բազմաթիւ վանքեր, որոնք փառքն ու պսակը եղան Ս. Երկրին՝ զարգացնելով հոն քրիստոնէական հարսարապետութիւնն ու գեղարուեստը եւ հրապուրելով խուցներում ուխտաւորներ այլ եւ այլ երկիրներէ . այլ եւս անապատը վերածուած էր շէնցած ու զարդարուած քաղաքի մը : Մեր նիւթին սահմանէն դուրս չեմ նկատեր քանի մը տղալի մեր Տիրոջ Տնօրինական Տեղեաց վրայ կառուցուած եկեղեցիներու մասին : Պաղեստինի վանքերու եւ եկեղեցիներու կառուցումները զարգացման երեք գլխաւոր շրջաններ ունեցած են . Ա. Կոստանդինեան (Գ. դար), Բ. Եղովսեան (Ն. դար) եւ Գ. Յուսիֆիանոսեան (Ձ. դար) : Կոստանդիանոս կայսրը քրիստոնէութիւնը պետական կրօնք հրատարակելի վերջ 325ին հրամայեց որ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ կառուցուի հոյադամբան մը հեղինական դարու պանդեոնի ձեւով, եւ Գողգոթայի մեծ եկեղեցին շինուի բիւզանդական ունով . կամարակապ եւ գեղազարդ՝ Կոստանդինեան Ս. Յարութեան տանարը նախադրուաներով միասին բիւզանդական հարսարապետութեան գլուխ գործոց մ'էր, ուր ոսկին ու արծաթը առատօրէն կը փայլէր եւ փառքն էր քրիստոնէութեան : Նոյն կայսեր միջոցաւ շինուեցան նաեւ Վերնասան, Ձիքենեաց Լեւան եւ Բերդհենի եկեղեցիները : Անոնցմէ վերջը շինուած է Գերսեմանիի Ս. Կուսի եկեղեցին : Ն. դարու առաջին քառորդին երուսաղէմ կը գտնուէին Հռոմայեցի սիկիւններ, ինչպէս Բաւլա եւ Երկու Միլանիաներ՝ որոնք երուսաղէմ բնակելով իրենց առատածեղնութեամբ մղում կու տան նոր եկեղեցիներու եւ վանքերու կառուցման : Այս շրջանին Համբարձման Լեւան ուրանկիւնային եկեղեցիին շինութեամբ՝ երուսաղէմի մէջ կը ներմուծուի շինութեան նոր տեսակ մը, որ